ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի հավելվածը հանդիսացող և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 21.10.2020թ. թիվ 21/9-Լ որոշմամբ հաստատված Կարանտինի պայմաններում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի 4-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Սահմանել 2021թ. գարնան որակավորման քննության կազմակերպման և անցկացման ժամանակացույցը, այն է՝

1.1. որակավորման քննություն հանձնելու դիմումների ընդունման ժամկետն է՝ 06.05.2021 թվականից մինչև 17.05.2021 թվականը ներառյալ, աշխատանքային օրերին ժամը 11.00-ից 17.00-ը.

1.2. քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հավակնորդների համար որակավորման քննությունն անցկացվելու է 26.05.2021թ-ին, ժամը 09:00-ից՝ ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2 հասցեում.

1.3. քրեաիրավական մասնագիտացմամբ հավակնորդների և հատուկ դիմորդների համար որակավորման քննությունն անցկացվելու է 27.05.2021թ-ին, ժամը 09:00-ից՝ ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2 հասցեում:

2. Սահմանել, որ որակավորման քննություն հանձնելու ժամի մասին հավակնորդները տեղեկացվելու են դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող ծանուցմամբ:

3. Սույն որոշումը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի նախագահ՝ Արա Զոհրաբյան

Որոշում N 02-Լ
04 մայիսի 2021թ.
ք. Երևան